

արուեստի³, ⁴Հռոմայերէն եւ Յունարէն⁵ ուսեալ դպրութիւն, եւ ⁶ոչ կարի ինչ⁷ անտեղեակ լեալ⁸ ձեռնարկութեան նշանագրաց. եւ ի վերայ այսոցիկ⁹ հասեալ ի դուռն Արշակունւոյ¹⁰, յամս քաջի եւ առաքինւոյն¹¹, ուժեղ եւ պատերազմողն¹² Տրդատայ, որ քան զամենայն նախնիսն¹³ քաջ եղեալ¹⁴՝ զանցոյց արութեամբ¹⁵, որ ըմպշամարտ սկայազաւր¹⁶ քաջութիւնս¹⁷ գործեաց¹⁸ ի մարտս¹⁹ պատերազմաց²⁰: 31 Ոչ ²¹զիր ²²ինչ քաջութիւն՝ սուտ հրամայեաց մեզ վիպասանել, եւ ոչ ²³զքմազարդ բանից ինչ²⁴ առասպելս ²⁵աւելի քան զարժանն ընթանալ. այլ²⁶ իրք որ²⁷ եղեալք վասն յեղանակաց ²⁸յեղափոխ ժամանակաց, մարտամբոյս պատերազմաց, սուրակոյս բազմահեղ²⁹ արեանց կոտորածոյ³⁰, անհուն զաւրաց³¹ շփոթելոց³², գերութեան³³

1 t հռոմայ

2 ac որ վարժեալ

3 b արուեստիւն

4 abc ուսեալ հռոմաերէն / pt հռոմարէն

5 a յունաերէն / c յունայերէն

6 t ոչինչ կարի անտեղեակ

7 p չիք ինչ

8 p լիեալ

9 abc այսորիկ

10 ac արշակունեաց

11 ac առաքինոյն / b եւ առաքինւոյ

12 t պատերազմող

13 ac չիք նախնիսն

14 ac քաջ եղեալ / bt քաջ եկեալ

15 b արութեամբն

16 ac չիք սկայազաւր

17 b քաջութիւնսն

18 pb գործէր

19 b ի մարտ

20 abc պատերազմացն

21 t զիր քաջութիւնն սուտ ինչ

22 b ինչ սուտ

23 ac քմազարդ բանից առասպելս ինչ

24 p չիք ինչ

25 b աւելի ինչ քան

26 p այդ

27 ac որք

28 pbt յեղափոխ պատերազմաց մարտամբոյս ժամանակաց

29 ac չիք բազմահեղ

30 pb կոտորածոց

31 b զաւրացն

32 ac շփոթելոց

33 c գերութիւն